Սովորենք բացահայտել վարդապետությունն ու սկզբունքները

Ավետարանի որոշ վարդապետություններ և սկզբունքներ հստակ ձևակերպված են սուրբ գրություններում: Այլ վարդապետություններ և սկզբունքներ կարող են ենթադրվել պատմության մեջ և դրանք հնարավոր է բացահայտել միայն սուրբ գրությունների ամբողջ գիրքը, գլուխը կամ մեկ հատված ուսումնասիրելով: Սուրբ գրություններն ուսումնասիրելիս կարող եք կիրառել հետևյալ կարևոր քայլերը, որոնք կօգնեն ձեզ բացահայտել ավետարանի ճշմարտությունները.

1. Կարդացեք դանդաղ և ուշադիր:
2. Փնտրեք հստակ ձևակերպված ճշմարտություններ: Դրանք երբեմն նշվում են, երբ հեղինակն օգտագործում է նմանատիպ բառեր. «այսպիսով մենք տեսնում ենք», «հետևաբար», «ուստի» կամ «ահա»:
3. Փնտրեք ենթադրվող ճշմարտություններ: Կարող եք գտնել այդ ճշմարտությունները՝ նմանատիպ հարցեր տալով ինքներդ ձեզ.
   a. Այս պատմության մեջ կա՞ն կարևոր գաղափարներ, բառեր կամ արտահայտություններ, հատկապես այնպիսիք, որոնք օգնում են ձեզ ավելի լավ ճանաչել Երկնային Հորը և Նրա ծրագիրը կամ Հիսուս Քրիստոսին և Նրա ավետարանը:
   b. Որո՞նք են է այս պատմության պատճառահետևանքային կապերը:
   c. Ո՞րն է պատմության բարոյախրատական իմաստը կամ նպատակը:
   d. Ձեր կարծիքով, ինչո՞ւ է հեղինակն ընդգրկել այս իրադարձությունները կամ հատվածները:
4. Ձեր բառերով գրեք, թե ինչ գտաք և նշեք սուրբ գրությունների այն բառերը, որոնք ուսուցանում են ձեր գտած ճշմարտությունը:
5. Խորհեք, թե ինչու է այդ ճշմարտությունը կարևոր ձեզ համար: Տասներկու Առաքյալների Քվորումից երեց Ջեֆրի Ռ. Հոլլանդն ուսուցանել է.

Խորհեք [և] զննեք ամեն մի բառ, սուրբ գրության ամեն մի մարգարիտ: . . . Պահեք այն դեպի լույսը և շրջեք, տեսեք, թե ինչ է արտացոլվում և բեկվում դրա մեջ: . . . Այդպիսի զննումը կարող է դաշտում թաքնված գանձ բացահայտել, մի թանկագին մարգարիտ, մի անգին մարգարիտ: («Ուսանողներին պետք են ուսուցիչներ, որ առաջնորդեն նրանց» [address to Church Educational System religious educators, June 20, 1992], 4)

© 2024 by Intellectual Reserve, Inc. All rights reserved. PD80007812_201_532-1